

ՄԵԼԿ

Տարեկան գինը 7 ռուբլ, կես տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արասխանյանի խանութում:

Օտարադաշնակիք դիմում են ուղղակի

Тифлис. Редакция „Мелк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն Մանիֆէստը. — Հրաման կովկասեան փոխարքայի. — Կիւնը մեզ հետ է: — Ներքին տեսութիւն: Պատերազմական բեմից: Գիւղական բանկերի մասին: Նամակ Բաշ-Շորակալից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւն: Թիւրքիա: Անգլիա: Աւստրո-Ունգարիա: Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց:

ԱՍՏՈՒԾՈՑ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ

ՄԵՆՔ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԵՐԿՐՈՐԴ

ԿՍՏՐ ԻՆՔՆԱՎԱԼ

ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍՈՑ

Եղբայ Լեւոն, Մեծ Իշխան Գինլանդիայի

և այլն, և այլն, և այլն

Բոլոր սիրելի հաւատարիմ հպատակներին յայտնի է այն ջերմ մանասկցութիւնը, որը միշտ Մենք կրում էինք ճաշկաստանի ծնունդած քրիստոնեայ ազգաբնակչութեան վիճակի վրա: Նորա գրութեան բարեփոխում և ապահովացնելու ցանկութիւնը բաժանում է Մեզ հետ և ամբողջ Ռուսաց ազգը, որը ցոյց է տալիս այժմ նոր զոհաբերութիւնը անելու իւր պատրաստակամութիւնը: Բալկանեան թերակղզու քրիստոնեաների վիճակը դիւրացնելու համար: Մեր հաւատարիմ հպատակների արիւնը և արժանաւորութիւնը Մեզ համար միշտ թանգ են եղել, Մեր ամբողջ թագաւորութեան մասին՝ պահպանելու Ռուսիայի համար խաղաղութեան շնորհները: Այդ հոգատարութիւնը դարձել էր մեզ համար հանապազօրեայ՝ չեղցողովնայում, Բոսնիայում և Բոլզարիայում կատարուող տիրալի անցքերը աչքի առաջ ունենալով: Մենք ամենից առաջ մեզ համար նպատակ ընտրեցինք արեւելեան քրիստոնեաների դրութեան բարեփոխմանը հասնել խաղաղ բանակցութեան և Մեր դաշնակից բարեկամ և եւրօպական մեծ ինքնակալների հետ համաձայնութեան միջոցով: Մենք երկու տարուայ ընթացքում չէինք դադարում ձգտելու դէպի այն, որ համոզեցնէր Բ. Դուռը վերանորոգութիւններ անելու, որոնք կարող էին պաշտպանել Բոսնիայի, չեղցողովնայի և Բոլզարիայի քրիստոնեաներին տեղական իշխանութեանց կամայականութիւնից:

Այդ վերանորոգութիւնների կատարումը ամբողջապէս բղխում էր Բ. Դրան բոլոր եւրօպայի դիմաց հանդիսաբար ընդունած առաջնայ պարտաւորութիւններից: Մեր ջանքերը, որոնց համաձայն էին և միւս կառավարութիւնները միաբան դիպլոմատիական պահանջներով, չէր հասցրին, սակայն, ցանկացեալ նպատակին: Բ. Դուռը մնաց անգրգուռ իւր վճռական բացասութեան վրա իւր քրիստոնեայ հպատակներին որ և իցեմի իսկական ապահովութիւն տալուց և բացասեց Կ. Պոլսի դեսպանաժողովի վճիռները: Բ. Դուռը համոզեցնելու համար՝ ցանկանալով փորձել համաձայնութեան ամենայն հնարաւոր միջոցները, Մենք առաջարկեցինք միւս զահլեճներին կազմել առանձին արձանագիր, մտցնելով նորա մէջ Կ. Պոլսի դեսպանաժողովի նոյն իրական վճիռները և հրաւիրել ճաշկաց կառավարութիւնը միանալ այդ միջազգային պայմանագրին, որը ցոյց է տա-

լիս Մեր խաղաղ պահանջների վերջին չափը: Բայց Մեր ակնկալութիւնը չարդարացան: Բ. Դուռը չը լսեց քրիստոնեական եւրօպայի միասիրտ ցանկութիւնը և չը միացաւ արձանագրի մէջ յայտնած եղբակցութիւններին: Սպառնալով մինչև վերջ Մեր խաղաղասիրութիւնը, Մենք Բ. Դրան վերին աստիճանի յամառութեամբ ստիպուած ենք սկսել աւելի վճռական գործունէութիւնը: Այդ պահանջում են և ճշմարտասիրութեան զգացմունքը և Մեր սեպական արժանաւորութեան զգացմունքը: Ճաշկաստանը իւր բացասութեամբ ձգում է Մեզ դէպի գէնքի ոյժը գիւնելու կարեւորութիւնը: Խոր համոզուած լինելով մեր գործի արդարութեան վրա և հեղաբար յուսալով Ամենաբարձրալի օգնութեան և ողորմածութեան վրա, յայտնում ենք բոլոր Մեր հաւատարիմ հպատակներին, որ հասաւ ժամը, որ նկատուած էր Մեր այն խօսքերի մէջ, որին ամբողջ Ռուսաստանը միասիրտ արձագանք տուաւ: Մենք արտայայտեցինք դիտաւորութիւն ինքնուրոյն կերպով՝ ներգործելու, երբ Մենք հարկաւոր կը համարէք և Ռուսաստանի պառլամը կը պահանջի այն: Այժմ գոչելով Աստուածային օրհնութիւնը Մեր շքեղափայլ զօրաց վրա, Մենք հրամայեցինք նորանց մտնել ճաշկաստանի սահմանները:

Տուաւ Քիւնիգսթում, ապրիլի 12 օրուս, Քրիստոսի ծննդեան հազար ութ հարիւր եօթանասուն և եօթերորդ թուականում և Մեր թագաւորութեան քսան և երեքերորդ տարում:

Իսկական իմա Նորին Կայսերական Մեծութեան սեպական ձեռով ստորագրած է՝

ԱԼԷՔՍԱՆԴՐ

Ապրիլ 12-ն 1877 ամի. Կիւնիգսթում

Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասեան բանակի Գլխաւոր Հրամանատարը բարեհաճել էր ուղղել հետեւեալ հրահանգները Աջարտանի, Քօբուէթի և Արզումի Վիլայէթի բնակիչներին:

Ա.

Բնակիչք Աջարտանի և Քօբուէթի:

Ամենայն Ռուսաց Թագաւոր Կայսեր կամ թով, ինձ յանձնած Կովկասեան բանակի զօրքերը մտնում են ձեր երկրի սահմանները: Բարեհաճի և Մարդասէր Ինքնակալը խաղաղ բնակչաց զեկանք պատճառելու համար չէ մերկայել իւր սուրը, նա իւր գէնքի փառք չէ որոնում անգէններին հարստահարելու: Նա ուղղում է նորան հարստահարելների պաշտպանութեան և հարստահարողներին սանձելու համար: Նա ցանկանում է ճշմարտութեան և մարդկային իրաւանց պատասխարելը:

Դորա համար Ռուսաց Թագաւորի զենուորները չեն երևում ձեր սահմանի մէջ իբրեւ սպառնալիք, — ոչ, ձեզանից իւրաքանչիւրին, որը ինքը իւր վարմունքով իրան չէ ցոյց տայ մեզ թշնամի, մենք բարեկամ պիտի համարենք և պիտի պաշտպանենք նորա ընտանիքը և արժանաւորութիւնը:

Եւ թող Ռուսաց զօրքերի ձեր երկրի մէջ մնալը չը ծառայի փոխադարձ թշնամանք և չարամալ յարուցանելու, այլ հոգեկան կապը սահմանելու և միացնելու մեզ ձեզ հետ, որդիք Բարձրութեան անդիւ ցեղի, արիւնակից

եղբայր Ռուսաց Կայսեր միշտ հաւատարիմ և սիրելի հպատակներին: *)

Բ.

Բնակիչք Արզումի Վիլայէթի:

Ինձ յանձնած Կովկասեան բանակի զօրքերը մտնում են ձեր սահմանների մէջ:

Ամենայն Ռուսաց Թագաւոր Կայսեր անուշով, ինչպէս Գլխաւոր Հրամանատար բանակի և Նորին Մեծութեան Փոխարքայ Կովկասում, յայտնում եմ ձեզ:

Ռուսաց զօրքերը չեն գալիս ճաշկաց պետութեան խաղաղ հպատակներին կործանելու համար, այլ անմեղ տանջողներին, հարստահարելներին օգնութեան ձեռք տալու համար:

Ձեր հանգստութեան և կայքերի ամբողջութեան մասին երկիւղ չունենաք: Ձեր գէնից մի մազ չը պիտի վայր ընկնի բռնաբարութեամբ, եթէ զուրկ վատահ դէպի մեր զօրքերը, խաղաղ կը մնաք ձեր բնակարաններում: Զօրաց առաջնորդին, Զօրապետ — Աջակից, Զօրապետ-Նեմեղազդի, Լօրիս-Մեղեքովին և հրաման եմ տուած խստիւ հաշտել յանցարարներին ձեզ պատճառած ամենայն անիրաւութեան և զրկանքի համար, եթէ, ընդդէմ ակնկալութեանց, պատահէր այդպիսի բան: Բայց և ամենայն ոք, ով մեր զօրաց ցոյց կը տայ հակառակ գործողութիւն, և մանաւանդ գէնքը ձեռքի մեր դէմը կանգնի, պիտի լինի մեզ թշնամի, — և թող նա ինքը իրեն յանցաւոր իմանայ այն զգալիութեանց մասին, որոնք կարող են պատահել նորան: **) Գլխաւոր Հրամանատար Կովկասեան Բանակի, Կովկասեան Փոխարքայ Կենեալ-Ֆելզցէլսմէյստէր

ՄԻՒՍՏԵԼ:

*) Այս հրահանգը թարգմանուած է վրաց և տաճկաց լեզուներով:
**) Թարգմանուած է հայոց և տաճկաց լեզուներով:

ԿԻՆԸ ՄԵՁ ՀԵՏ Է

Կինը սարսափելի հզօր մի ոյժ է հասարակութեան մէջ:

Պատմութիւնը մեզ ցոյց է տալիս որ երբ կինը ընդդէմ է լինում մի որ և է գաղափարին, — այն գաղափարը պէտք է բոլորովին կորած համարվի: Երբ կինը անտարբեր է դէպի մի հարց, մի գաղափար, մի երևոյթ, — այն հարցը, այն գաղափարը, այն երեւոյթը անշարժ կը մնայ: Երբ կինը, ընդհակառակն, իրան դաշնակից, համակրող է յայտնում մի գաղափարի, — հաստատ կարելի է ասել որ այն գաղափարը անպատճառ յաղթող կը հանդիսանայ իր ճանապարհում՝ պատահած ամեն տեսակ արգելքներից...

Հասարակութեան մէջ ամեն տեսակ առաջադիմութիւնը և յետադիմութիւնը կախված է այն

հասարակութեան մէջ կնոջ մասնակցութեանից կամ ընդդիմադրութեանից: Ընտանեկան բարոյականութիւնը, ուրեմն և հասարակական բարոյական դիրքը, կախված է կնոջ բարոյական զարգացումից...

Մենք շատ անգամ գտնուած վում ենք թէ հայերը չը գիտեն և արհամարհում են իրանց մայրենի լեզուն: Բայց մենք երբեք չենք իմանայ մեր մայրենի լեզուն, մինչև որ հայ կինը իր մայրենի լեզուն չիմանայ: Մենք քիչ օրինակներ չենք տեսել որ հայերէն շատ լաւ իմացող հայ երիտասարդ, պատկերով օտարացած հայ օրիորդի հետ, որ չէր իմանում իր մայրենի լեզուն, — ենթարկվում էր իր կնոջ ազդեցութեանը, վերջը ինքն էլ մայրենի լեզուով չէր խօսում և մոցնում էր մի օտար լեզու իր ընտանիքում:

Հատ շատ տաա տարի է որ Ռուսաստանի հայերի մէջ կինը սկսեց փոքր առ փոքր մասնակցել մեր հասարակական-ազգային կեանքի գրեթէ բոլոր երևոյթներին:

Տաս տարուց աւելի է որ հայ կինը փակված, ստրկացած ընտանեկան կեանքից դուրս եկաւ և սկսեց փոքր առ փոքր մասնակցել մեր հասարակական կեանքին:

Նա դարձաւ վարժ ու հի, սկսեց հետաքրքրվել մեր լրագրութեան գործով, սկսեց մասնակցել հայոց թատրօնական ներկայացումներին, սկսեց գրել մեր լրագրութեան մէջ, սկսեց իր թոյլ աշխատանքներով հարստացնել մեր գրականութիւնը, և վերջապէս այդ մօտ օրերումս հանդէս դուրս եկաւ և լայն ազգային ապագրիզում՝ հայ կինը անտարբեր չը մնաց ազգային հարցերին, և սկսեց հետաքրքրվել և մասնակցել ընդհանուր, լայն ազգային օգուտներին: Հայերի մի մասի թշուառացած վիճակին հայ կինը օգնութեան ձեռքը մեկնեց, ոչ թէ միայն մասնակցելով բայց քառնի մի տեղ առաջնորդելով յօգուտ տառապեալ վանեցիկների նուիրատուութիւնների հաւաքելուն...

Որքան և աննշան լինէին հաւաքված նիւթական միջոցները համե-

Դառնանք դիպել պ. Խաչատրյանից գրած նամակը և բացատրենք գործի որպիսութիւնը։ Պ. Խաչատրյանը գրել է իւր նամակի մէջ իբրեւ ինձ հետ կապուել է երեք դաշնագրով Մօղ-նու հեղեղեցու շինութիւնները շինելու մասին, միջոց կանխիկ վճարելիս է եղել փողը մասը մասը, այնպէս որ իբրեւ ինձ է մինչև ետ առաջին մասը, և ինչի ծախս անում է չէր սպասել երկրորդ մասը, և երբ ստուգում էր իբրեւ պ. Խաչատրյանից ստա-նիս էր երկրորդ մասը ստորագրել ապա ինձ մատնանում, և այս օրինակ շարունակվել է իբրեւ ինձ շինութիւնը։ Բայց ես չեմ ունեցել գու-մար, և չէի կարողանում շինել և գործը առաջ առնել։ Իսկ դր հաստիւրումն պէտ իրովոյն դատա-նեցնում էի գործը։ Այս բանը կերելոյ իր Բօր-թովից գրած խաչատրյան որ ունեւ ներկայացնել որ հարկն է վերապահս շինութիւնը վերջաց-նելուց յետոյ ես տուել եմ նորան իբրեւ ինձ 1875 թուին օգոստոսի 4-ին (այսուհի կրեւում է վե-րոյնիշաւ նամակի մէջ ինչ թիւ որ գրեւել է մո-տայեւ է, նրա համար պատահական թիւը 4-ն զգուստաւ է վերցրել) ապահովագիր որով հաւ-տատում էի ինձ ես ստացել եմ նորանից լիովին երեք դաշնագրով բաւականութիւն, և ոչինչ պա-հանելիք չունի նորանից։ Բոլոր արհեստա-ւորներն և թիֆլիսի երեկոյ շատ անձանց, որոնք հետ եմ ուսած եմ ունեցել ասանել է սե-

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ